Հավելված 7
«--ՀԲԿ -ԳՀԱՊՁԲ--19-/-0102--»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «--ՀԲԿ -ԳՀԱՊՁԲ--19-/-0102-1-»

ք. Հրազդան «__25__» ապրիլի 2019 թ.

,,ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ,, ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն ԼԻԼԻԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ,,ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ,, ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա.Ասատրյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __30__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն

ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահ[illegible] փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռ[illegible] համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4533098.2 (Չորս միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար իննսունութ)ՀՀ դրամ, ներառյալ 755516 դրամ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդ
չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող
մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամ
հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում
են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի
նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված
գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ
ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային
պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն
ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը
ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն
հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի
դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով
պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից
ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ
պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝
պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է
հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից
ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված
համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց
պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ
հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ
պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,
Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված
մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության
օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու
պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում
գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային
պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով
Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր
Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած
վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության
դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ
համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում գումարը հաշվարկվում պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար վճիռ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրում հանվում է:*

[illegible]վում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին [illegible]ջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, [illegible]նք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը կ
միակողմանիորեն լուծվում է:[6]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	,,ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ,,ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան	Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
թաղ., Պուրակային 32	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
077-448141	Հ/Հ 1570005065330100
Հայրիզնեստանկ ՓԲԸ	ՀՎՀՀ 01222567
1150096607846O	Տնօրեն՝ Ա.Ասատրյան
03017721	
Լիլիա Կարապետյան	
ստորագրություն	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

« 25 » 04 20

«--ՀԲԿ -ԳՀԱՊՁԲ--19-/-0102-1-» ծածկագրով պայմ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
5	33621620	Սպիրոնոլակտոն c03da01		Սպիրոնոլակտոն 25 մգ	հատ	35	175000	5000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	5000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
7	33651112	Ամօքսիցիլին+ կլավոնաթթու – լանաթթու j01cn02		Ամօքսիկլավ 250/ 62.5 օշարակ	հատ	1869	934500	500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 7732	500	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
8	33621110	Վարֆարին b01aa03		Վարֆարին B01AA03 5. Մգ դ/ հատ	հատ	34	136000	4000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	4000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
9	33621420	Ատորվաստատին c10 aa 05		Ատորվաստատին 20 մգ	հատ	17.89	35780	2000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյ	2000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային

									Պուրակային 32		մինչև 15.12.2019թ
10	33621290	Էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01		Ադրենալին A01 AD 01, B 02 BC 09, C 01 CA 24 R01 AA14, R03AA01,S01EA01 1.8մգ/մլ ներարկման լուծույթ	հատ	129.89	38967	300	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	300	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
11	33621310	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) C01EB15		Տրիմետազիդին (տրիմեկոր) 35 մգ դ/ հատ	հատ	21.45	53625	2500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	2500	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
14	33631310	Դիկլոֆենակ d11ax18m01ab05, m02aa15, S01bc03		Դիկլոֆենակ 12.5 մգ մոմիկ	հատ	93.14	139710	1500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1500	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
17	33621720	Բիսոպրոլոլ c07ab07		Բիպրոլ 5 մգ 5 C07ab07	հատ	7.42	22260	3000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	3000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
22	33631300	Կետոպրոֆեն m01ae03, m02aa10		Կետոպրոֆեն դոնդող 50 գ Վալուսալ	հատ	1190	59500	50	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	50	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
23	33631310	Դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03		Դիկլոֆենակ D11 AX 18 , M01 AB05, M02 AA 15, S 01 BC 03, 50 մգ դ/ հատ	հատ	14.32	85920	6000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	6000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
34	33671112	իպրատրոպիումի		իպրատրոպիումի	հատ	3385	33850	10	Ք.Հրազդան,	10	Պայմանագ հաստատ

		r03bb01		ֆենոտերոլ 0.5 մգ/մլ / Բերոդուալ / լ-թ շնչառման 20 մլ					ան թաղ. Պուրակային 32		օրից մինչև 15.12.2019թ
39	33661122	Պարացետամոլ n02be01		Պարացետամոլ N02 BE01 150մգ դեղահատ	հատ	50.73	76095	1500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1500	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
41	33661125	Սպազմալգոն 5 մլ N02BB52 , A03DA02 , N02BB52		Սպազմալգոն 5 մլ / Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ լ-թ ներարկման	հատ	144	432000	3000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	3000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
45	33691176	Այլ դեղորայք / Խոլիսալ գել 10 գ /		Խոլիսալ գել 10 գ	հատ	2257.84	11289.2	5	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	5	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
47	33691236	Քլորոպիրամին հիդրոքլորիդ R06AC03, D04 AA09		Քլորոպիրամին հիդրոքլորիդ 25 մգ դեղահատ	հատ	41.68	45848	1100	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1100	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
48	33661140	Քլորպրոմազին n05aa01		Ամինազին 25 մգ	հատ	25.52	30624	1200	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1200	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
52	33671116	Քսիլոմետազոլին r01aa07, r01ab06, s01ga03		Քսիլոմետազոլին R01AA07 R01AB06,S01GA03 0.5	հատ	362.4	18120	50	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ.	50	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց

									32		15.12.2019թ
53	33691176	Այլ դեղորայք սիդնոֆարմ 2 մգ		Մոլսիդոմին 2 մգ	հատ	21.77	34832	1600	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1600	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
56	33621240	ցիանոկոբալամին b03ba01		Վիտամին B 12 0.5 մգ / մլ 1մլ , սրվակ	հատ	18.35	36700	2000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	2000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
58	33691176	Այլ դեղորայք / Գլիցերին 1.0/		Գլիցերին 1.0 գ/մոմիկ	հատ	86.49	86490	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
59	33691176	Այլ դեղորայք / Բիսակոդիլ 5 մգ/		Բիսակոդիլ 5 մգ	հատ	6.79	6790	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
64	33661127	մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02		Մեթամիզոլ 500 մգ դեղահատ	հատ	8.15	8150	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
72	33691176	Այլ դեղորայք գլիցիրին 5 մլ		Գլիցիրին 5 մլ+ ակտիվ նյութ 90 գ +օգագործվող ջուր 10 գ միկրոկլիզմայի համար	հատ	80.87	8087	100	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	100	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
74	33691199	Սիլիմարին - A05BA03		Կարսիլ 35 մգ / սիլիմարին/	հատ	16.45	41125	2500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյ	2500	Պայմանագրի հաստատումից հաշված 21-

									Պուրակային 32		օրից մինչև 15.12.201
75	33691201	Կատվախոտի ոգեթուրմ - N05CM09 բուսական ծագման դեղ		Կատվախոտի հանուկ դեղահաբ	հատ	1.77	8850	5000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	5000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
78	33691222	Ցինարիզին-N07CA02		Ցինարիզին 25 մգ	հատ	4.99	14970	3000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	3000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
79	33631430	Դեքսկետոպրոֆեն / դեքսալգին+տրոմետազոլ / M01 AE 17		Դեքսալգին 25 մգ սաշե փոշի	հատ	161.32	193584	1200	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	1200	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
80	33691226	Տրամադոլ (տրամադոլի հիդրոքլորիդ)-N02AX02		Տրամադոլ 100 մգ / 2 մլ թ ներարկման	հատ	88.34	176680	2000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	2000	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
91	33621740	Ամլոդիպին c08ca01		Ամլոդիպին 5 մգ դեղահատ	հատ	6.89	115752	16800	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	16800	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
92	33671113	Սալբուտամոլ r03ac02		Սալբուտամոլ աէրոզոլ	հատ	1000	265000	265	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	265	Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 15.12.2019թ
97	33621150	Ֆիտոմենադիոն		Կոնակիոն –	հատ	1207	1207000	1000	Ք.Հրազդան,	1000	Պայմանագրի հաստատումից

				0.2 մլ լ-թ ներարկման սրվակ				ան թաղ. Պուրակային 32		օրացույցային օրից սկսած մինչև 15.12.2019թ
						4533098.2				

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում. Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը գրաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

****Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում, ք. Հրազդան, Մ բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում
*****Ապրանքի մատակարարումը
****** Ապրանքը պետք է լինի չօգտագործված:
***** Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:
*Նյութերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն << ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*Նյութերի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, նյութի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, նյութը հանձնման պահին կարող է ունենալ նյութի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

ՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ.,
Պուրակային 32
077-448141
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500966078460
03017721
Լիլիա Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

,,ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ,,ՍՊԸ
Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"

Հավելված N 2
« 25 » 04 2019 թ. կնքված
«--ՀԲԿ -ԳՀԱՊՁԲ--19-/-0102-1-» ծածկագրով պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	ԴԵՂՈՐԱՅՔ		403775	895400	1256900	1780000	2152000	2875200	3245600	3985650	4533098.2	4533098.2

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մատակարարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
077 448141
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
1150096607 8460
03017721
Լիլիա Կարապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
„ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ„ՍՊԸ
Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Խնատրյան
/ստորագրություն/
Կ.Տ